ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԻ ԱՐԹՈՒՐԻ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՍԵՂՄԱԳԻՐ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բաբկենի Բոստանջյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ Իշխանի Վարդանյան

Տնտեսագիտության թեկնածու
Լիլիթ Սամվելի Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2025թ. հունվարի 24-ին ժամը 13:30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ Երևան 0025, ք. Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2024թ. դեկտեմբերի 24-ին

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տ.գ.թ., դոցենտ Ա. Հ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Անկախության ձեռքբերումից հետո Հայաստանի Հանրապետությունում իրականացված լայնամասշտաբ տնտեսական վերափոխումների հիմնական նպատակներից մեկը շուկայական տնտեսության ձևավորումն էր: Կարելի է ասել, որ այդ բարեփոխումներն ընդգրկեցին կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն դերն ու նշանակությունն ուներ շուկայական հարաբերությունների զարգացման գործում: Դրանց կարևոր ուղղություններից մեկն, անշուշտ, բյուջետային համակարգի վերափոխումներն էին, որոնք սերտորեն կապված էին կառավարման համակարգի, պետական կառուցվածքի, վարչատարածքային բաժանման և մի շարք այլ ոլորտներում արմատական քայլեր իրականացնելու անհրաժեշտության հետ: Գլխավոր նպատակը շուկայական տնտեսության պահանջներին բավարարող և պետության գործառույթների պատշաճ իրականացումն ապահովող բյուջետային համակարգի ստեղծումն էր: Դա բավականաչափ բարդ գործընթաց էր, հատկապես եթե հաշվի ենք առնում ինստիտուցիոնալ և իրավական հիմքերի, ինչպես նաև պետական ֆինանսների կառավարման ոլորտում ավանդույթների բացակայությունը և մի շարք այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ:

Շուկայական հարաբերությունների անցած ժամանակահատվածում հանրապետությունում իրականացված բյուջետային քաղաքականությունը դրական ձեռքբերումներով հանդերձ ունեցել է նաև մի շարք բացթողումներ և չի կարողացել ապահովել իրեն վերապահված գլխավոր խնդրի՝ հասարակության պահանջմունքների բավարարման և պետության ծախսային պարտավորությունների լիարժեք և համապարփակ կատարման լուծումը: Նման իրավիճակի պատճառներն ունեն ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթ՝ պայմանավորված օրենսդրահիրավական, ինստիտուցոնալ և մի շարք այլ գործոններով: Ներկայումս ՀՀ-ում իրականացվող բյուջետային քաղաքականությունը դեռևս թույլ չի տալիս ապահովել պետության սոցիալ-տնտեսական կարիքների ամբողջական բավարարում և բնակչության սոցիալական բարեկեցության բարձրացում: Դա հիմնականում պայմանավորված է երկրի ֆինանսական հնարավորությունների և ծախսային պահանջմունքների

անհամապատասխանությամբ: Այս առումով հատկապես ֆինանսական սուղ միջոցների պայմաններում առաջին պլան են մղվում բյուջետային քաղաքականության կատարելագործման և բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիրները: Ակնհայտ է, որ պետության գործառույթների շրջանակի ընդլայնումը պահանջում է բյուջետային քաղաքականության բարելավում, բյուջետային ծախսերի ծավալների շարունակական ավելացում և դրանց ուղղությունների ու կառուցվածքի վերանայում: Ընդ որում, այդ համատեքստում հատկապես կարևոր նշանակություն են ստանում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման և հիմնավորվածության ապահովման հիմնահարցերը: Տնտեսական զարգացման ներկա փուլում, ելնելով ՀՀ տնտեսության երկարաժամկետ զարգացման հրամայականից, բյուջետային քաղաքականության կատարելագործմանն ուղղված մոտեցումների մշակումն ու գործնական կիրառումը ձեռք է բերել առանցքային նշանակություն: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են թեմայի ***հրատապությունն ու արդիականությունը:***

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության կատարելագործմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել բյուջեի սոցիալ-տնտեսական բովանդակությունը և դերը տնտեսության պետական կարգավորման գործընթացում,
- ուսումնասիրել բյուջետային քաղաքականության էությունն ու հիմնական խնդիրները, վերլուծել բյուջետային ծախսերի տեսական հիմքերը և դրանց արդյունավետության ապահովման հիմնահարցերը,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության օրենսդրահիրավական և կազմակերպական հիմքերը, բացահայտել դրա իրականացման հիմնախնդիրները և դրա արդյունավետության վրա ազդող գործոնները ՀՀ-ում,
- ուսումնասիրել բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովման խնդիրները,
- մշակել բյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ բյուջետային համակարգն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ բյուջետային քաղաքականությունը:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ կայանում են հետևյալում.

- բյուջետային համակարգի գործունեությունը կանոնակարգող օրենսդրական դաշտի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են առկա բացթողումները և թերությունները, ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված բյուջետային քաղաքականության կատարելագործմանը,
- բյուջետային ծախսերի տեսական հիմքերի համակողմանի վերլուծության արդյունքում մշակվել են բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման հիմնական ուղիները և դրա գնահատման մեթոդաբանական հիմքերը,
- առաջարկվել է բյուջետային ծախսերի հիմնավորվածությունը դիտարկել որպես բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունք, բացահայտվել և համակարգվել են բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովման հիմնախնդիրները, առաջարկվել է դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր՝ բյուջետային ծախսերի պլանավորման և իրականացման փուլերում հաջորդական քայլերի ներկայացմամբ,
- մշակվել է բյուջետային ծախսերի պլանավորման բազմափուլ մոտեցում՝ սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նպատակների հիման վրա բյուջետային ծախսերի գերակայությունների սահմանումից մինչև բյուջետային ծախսերի իրականացումն ապահովող իրավական և մեթոդական ապահովվածության ուղիների ամրագրմամբ:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Բյուջետային քաղաքականության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում տնտեսության զարգացման, գործարար միջավայրի բարելավման և բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և դրա

հետևողական իրականացման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության գիտագործնական նշանակության խնդիրները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում: Ստացված արդյունքների հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 121 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, պարունակում է 4 գծապատկեր և 9 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են հետազոտության նպատակը և խնդիրները, հստակեցվում են հետազոտության օբյեկտը և առարկան, մեթոդաբանությունը, հակիրճ ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Բյուջետային քաղաքականության տեսական և մեթոդական հիմքերը» գլխում ուսումնասիրվել է բյուջեի սոցիալ-տնտեսական բովանդակությունը և դերը տնտեսության պետական կարգավորման գործընթացում, քննարկվել են բյուջետային քաղաքականության էությունն ու հիմնական խնդիրները և բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման հիմնահարցերը:

Շուկայական տնտեսության պայմաններում պետության կարևոր խնդիրը հասարակական բարիքների արտադրությունն ու մատուցումն է՝ ելնելով հասարակության

պահանջմունքների բավարարման հրամայականից: Տնտեսավարման տվյալ եղանակի պայմաններում պետությունը հանդես է գալիս որպես շուկայի յուրահատուկ գործակալ՝ իրականացնելով խիստ որոշակի և նպատակաուղղված տնտեսական գործունեություն՝ մասնավորապես հասարակական բարիքների արտադրության և տրամադրման ուղղությամբ: Պետք է նշել, որ տնտեսական գործընթացներին պետության միջամտության անհրաժեշտությունը հատկապես մեծանում է շուկայական ենթակառուցվածքների թերզարգացվածության պայմաններում: Նման իրավիճակում պետության միջամտությունը կոչված է ինչ-որ առումով լրացնելու շուկայական մեխանիզմների գործունեությունը և ապահովելու տնտեսական գործընթացների սահուն ընթացքը: Պետության գործառույթների պատշաճ իրականացումը և երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումն ակնհայտորեն պահանջում են ֆինանսական ռեսուրսների որոշակի ծավալի առկայություն: Տվյալ խնդրի լուծման հիմնական միջոցը երկրի բյուջետային համակարգն է, որը, հանդիսանալով պետական ֆինանսական միջոցների կենտրոնացված ֆոնդ, իր վրա է կրում պետության կենսագործունեության ֆինանսական ապահովվածության ամբողջ ծանրությունը: Բյուջետային քաղաքականությունն իրենից ներկայացնում է սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և պետության գործառույթների իրականացման համար միջոցների հատկացման գործընթաց կամ որ նույնն է՝ հասարակական բարիքների արտադրության և տրամադրման նպատակով ծախսերի իրականացում: Վերջինիս էությունը կայանում է հավաքագրված եկամուտների հաշվին ծախսային հոդվածների ֆինանսավորման մեջ: Ըստ էության, այդ քաղաքականության հիմնական նպատակներից մեկը տնտեսական կոնյուկտուրայի ոչ բարենպաստ փոփոխությունների կանխարգելումն է:

Բյուջետային քաղաքականության դերը հատկապես մեծանում է տնտեսության ոչ ցանկալի զարգացումների և ճգնաժամերի պայմաններում, երբ ՀՆԱ-ի կրճատման հետևանքով նվազում են հարկային եկամուտները, պետական սեփականության կառավարումից ստացվող մուտքերը, աճում է բյուջետային դեֆիցիտը, պետական պարտքը և տնտեսական աճի խթանման նպատակով մեծանում է բյուջետային ծախսերի ավելացման անհրաժեշտությունը: Հատկապես նման պայմաններում բյուջետային քաղաքականության գերխնդիր է դառնում բյուջետային միջոցների նպատակային, արդյունավետ և ռացիոնալ օգտագործման ապահովումը կամ այլ կերպ ասած՝ սահմանափակ ֆինանսական ռեսուրսներով առավել մեծ

շրջանակի խնդիրների լուծումը: Անշուշտ, դա, ի թիվս այլ խնդիրների, ենթադրում է նաև բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մոտեցումների հստակեցում:

Ատենախոսության երկրորդ՝ «Բյուջետային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները ՀՀ-ում» գլխում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության օրենսդրահիրավական ապահովվածության հիմքերը, վերլուծության են ենթարկվել դրա վրա ազդող գործոնները, ինչպես նաև բյուջետային ծախսերի հիմնական ուղղությունները և դինամիկան:

Հայաստանի Հանրապետությունում բյուջետային բարեփոխումների առաջին քայլերից մեկը օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումն էր, որը հաջորդեց հանրապետությունում իրականացված վարչատարածքային բաժանմանն ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորմանը: Բյուջետային ոլորտում հարաբերությունների կարգավորման մեխանիզմների ու ընթացակարգերի ձևավորման նպատակով 1997 թվականին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքը, որով սահմանվեցին բյուջետային համակարգի գործունեության և բյուջետային գործընթացի իրականացման իրավական հիմքերը: Ըստ էության, այն դարձավ հանրապետությունում բյուջետային քաղաքականության մշակման ու իրականացման ուղղությունները և դրա ինստիտուցիոնալ ապահովվածությունը սահմանող հիմնական իրավական ակտը: Շուկայական հարաբերությունների անցած ժամանակահատվածում հանրապետության բյուջետային համակարգի բարեփոխումները կրել են շարունակական բնույթ, որոնց գլխավոր նպատակն է եղել պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական հիմքերի կատարելագործումն ու զարգացումը: Դրանց շրջանակը եղել է բավականաչափ լայն և իր մեջ ընդգրկել է բյուջետային պլանավորման, պետական ֆինանսների կառավարման, բյուջետային գործընթացի կատարելագործման և մի շարք այլ ուղղություններ:

Հանրապետությունում ձևավորված բյուջետային համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրահիրավական հիմքերն իրենց թերություններով և բացթողումներով հանդերձ վերջին տարիներին հնարավորություն են տվել իրականացնել պետության նվազագույն կարիքներին բավարարող բյուջետային քաղաքականություն՝ ապահովելով պետության հիմնական գործառույթների բավարար մակարդակով իրականացում: Վերջին 10 տարիներին

հանրապետությունում գրանցված մակրոտնտեսական զարգացումները և, առաջին հերթին, գրանցված տնտեսական աճի կամ անկման ցուցանիշներն իրենց անդրադարձն են ունեցել վարվող բյուջետային քաղաքականության վրա՝ պայմանավորված նշված զարգացումների հետևանքով հարկային եկամուտների աճով կամ կրճատմամբ: Նշված, ինչպես նաև այլ գործոններով պայմանավորված՝ 2012-2023 թվականներին բյուջետային ծախսերն ունեցել են հետևյալ դինամիկան:

Աղյուսակ 1.

Բյուջետային ծախսերի և բյուջետային ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության դինամիկան 2012-2023 թվականներին[1]

	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը ծախսեր (մլրդ դրամ)	1.006.1	1.142.9	1.235.1	1.409.0	1.449.1	1.504.8	1.447.1	1.629.4	1.894.6	2.004.3	2.242.6	2.547.6
Ընդամենը ծախսեր/ՀՆԱ (տոկոսային արտահայտությամբ)	23.6	25.1	25.5	28.0	28.6	27.0	24.1	24.9	30.6	28.7	26.4	26.8

Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ի տվյալներից՝ վերջին տարիներին հանրապետությունում պետական բյուջեի ծախսերն անվանական արտահայտությամբ հիմնականում աճել են: 2012-2023 թվականներին դրանց աճը կազմել է 1.541.5 մլրդ դրամ՝ ավելի քան կրկնակի չափով: Որոշակի կրճատում է արձանագրվել 2018 թվականին, որը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 57.7 մլրդ դրամ: 2023 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ծախսերն աճել են մոտ 305 մլրդ դրամով: Ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը ևս դիտարկված ժամանակահատվածում կրել է տատանողական բնույթ: 2012-2020 թվականներին բյուջետային ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության ամենաբարձր

[1] 2023 թվականի տվյալները վերցված են «2023 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն»-ից, 2022 թվականի տվյալները վերցված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին» հրապարակումից, 2021 թվականի տվյալները վերցված են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022»-ից, 2015-2020 թվականների տվյալները վերցված են «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2021»-ից, 2012-2014 թվականների տվյալները վերցված են «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015»-ից, www.armstat.am

ցուցանիշը գրանցվել է 2020 թվականին: Սակայն հաջորդող տարիներին այն գրանցել է նվազում: Ընդհանուր առմամբ, նշված ժամանակահատվածում այդ ցուցանիշը միջինում կազմել է 26 տոկոս:

Ինչ վերաբերում է ըստ գործառնական նշանակության ծախսերի դասակարգմանը՝ ապա վերջին տարիներին այս ուղղությամբ ևս արձանագրվել են որոշակի օրինաչափություններ թե՛ ընդհանուր ծախսերում ունեցած տեսակարար կշռի, թե՛ ուղղվածության առումով (տես աղյուսակ 2):

ՀՀ պետական բյուջեի ծախսերն ըստ ծախսերի գործառնական դասակարգման 2012-2023 թվականներին[2]

	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը ծախսեր	***1.006.1***	***1.142.9***	***1.235.1***	***1.409.0***	***1.449.1***	***1.504.8***	***1.447.1***	***1.629.4***	***1.894.6***	***2.004.3***	***2.242.6***	***2.547.6***
01 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	160.5	188.1	217.3	281.4	292.1	274.7	278.5	320.1	344.3	381.0	407.4	522.5
02 Պաշտպանություն	152.8	182.1	190.4	198.5	225.9	294.4	238.5	315.6	387.8	336.0	480.4	525.9
03 Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	76.7	91.4	104.8	122.0	120.3	122.5	123.1	143.7	151.4	160.0	196.8	207.6
04 Տնտեսական հարաբերություններ	71.1	128.3	93.3	109.8	131.1	129.5	112.2	111.9	125.5	151.8	175.8	199.2
05 Շրջակա միջավայրի պաշտպանություն	7.0	4.6	4.7	5.6	4.5	5.4	5.7	5.8	4.4	6.0	6.8	7.7
06 Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	14.3	21.7	31.3	39.2	25.6	12.6	11.7	16.2	8.9	9.5	9.5	10.9
07 Առողջապահություն	64.5	64.4	76.6	86.1	88.6	83.2	79.6	99.3	148.2	160.5	142.1	141.3
08 Հանգիստ, մշակույթ և կրոն	22.8	18.6	21.4	30.4	26.6	26.0	25.3	33.5	33.6	30.4	43.8	43.3

[2] 2023 թվականի տվյալները վերցված «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին» հրապարակումից, 2022 թվականի տվյալները վերցված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին» հրապարակումից, 2021 տվյալները վերցված են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022»-ից, 2012-2014 թվականների տվյալները վերցված են «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015»-ից, 2015-2020 թվականների տվյալները վերցված են «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2021»-ից, www.armstat.am

09 Կրթություն	102.8	103.1	115.8	122.3	122.4	124.4	121.6	129.3	143.8	149.1	165.4	183.6
10 Սոցիալական պաշտպանություն	291.7	297.4	342.5	383.7	396.8	408.9	416.6	453.9	546.6	620.0	614.5	705.8
11 Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	41.9	43.2	47.0	29.9	15.1	23.0	34.3	-	-	-	-	-

Ինչպես նկատում ենք աղյուսակ 2-ի տվյալներից՝ 2012-2023 թվականներին բյուջետային ծախսերի կառուցվածքում անվանական արտահայտությամբ ամենամեծը եղել են սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը, որոնք 291.7 մլրդ դրամից դարձել են 705.8 մլրդ դրամ:

Ըստ էության, վերջին տարիներին հանրապետությունում իրականացված բյուջետային քաղաքականությունը հիմնականում ապահովել է պետության նվազագույն գործառույթների իրականացումը: Միևնույն ժամանակ, այն դեռևս հնարավորություն չի տալիս լուծել երկրում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների առավել լայն շրջանակ՝ պայմանավորված մի շարք պատճառներով: Այս առումով խիստ կարևորվում է այն մեխանիզմների ձևավորումը, որոնք կոչված են ապահովելու բյուջետային համակարգի հիմքում դրված սկզբունքների գործնական և ըստ նպատակային նշանակության կիրառումը:

Ատենախոսության երրորդ՝ «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղղությունները ՀՀ-ում» գլուխը նվիրված է բյուջետային ծախսերի պլանավորման կատարելագործման ուղիների, դրանց արդյունավետության և հիմնավորվածության ապահովման հիմնական մոտեցումների մշակմանը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ժամանակակից փուլում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների զգալի մասը պայմանավորված է պետական ֆինանսական միջոցների սահմանափակությամբ: Նման իրավիճակում բյուջետային քաղաքականության կատարելագործումը դառնում է հրամայական պահանջ, որի գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի բյուջետային միջոցների արդյունավետ, նպատակային և հիմնավորված օգտագործումը: Հատկապես սեփական եկամուտների ավելացման հնարավորությունների և ռեզերվների բացակայության դեպքում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը դառնում է հրամայական պահանջ: Ըստ էության, Հայաստանի Հանրապետությունում ևս այն ունի առանձնահատուկ նշանակություն, որից

մեծապես կախված է պետության և հասարակության առջև ծառացած հիմնախնդիրների լուծումն ու սահմանված նպատակների ձեռքբերումը: Միևնույն ժամանակ, նման խնդրի լուծումը պետք է դիտարկել առավել լայն համատեքստում՝ բյուջետային պլանավորումից սկսած մինչև ծախսերի իրականացում, քանի որ վերջիններիս արդյունավետության, հիմնավորվածության և նպատակայնության ապահովումը մեծապես պայմանավորված է բյուջետային գործընթացի բոլոր փուլերում իրականացվող քայլերով և կիրառվող մոտեցումներով:

Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության կատարելագործման կարևոր ուղղություններ մեր կարծիքով պետք է հանդիսանան միջնաժամկետ բյուջետային կանխատեսումների և բյուջեի ծախսերի պլանավորման ծրագրանպատակային մեթոդների հետագա զարգացումը, տարեկան և հեռանկարային բյուջետային պլանավորման փոխկապվածության խորացումը, բյուջետային միջոցների կառավարման ժամանակակից ձևերի և մեթոդների կիրառումը, պետական ֆինանսական վերահսկողության համակարգի կատարելագործումը և բյուջետային գործընթացի մասնակիցների պատասխանատվության ուժեղացումը:

Հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում բյուջետային քաղաքականության կատարելագործման կարևոր խնդիրներից մեկը բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդաբանական հիմքերի մշակումն է: Ակնայտ է, որ դրանց առանձնահատուկ բնույթը պահանջում է արդյունավետության գնահատման հատուկ մոտեցումների կիրառում: Պետության գործառույթների շրջանակի ընդլայնումը պահանջում է պետական ծախսերի ծավալների շարունակական ավելացում և դրանց ուղղությունների ու կառուցվածքի վերանայում: Ֆինանսական սահմանափակ ռեսուրսների պայմաններում դա բավականաչափ բարդ է, ինչի պարագայում բյուջետային միջոցների հիմնավորվածության ապահովումը դառնում է հրամայական պահանջ: Այն ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ, առաջին հերթին, կապված է առկա ֆինանսական հնարավորությունների՝ պետության ու հասարակության զարգացման կարիքներին համահունչ օգտագործման հետ: Մինչդեռ, ՀՀ բյուջետային օրենսդրությունում որևէ կերպ անդրադարձ չկա բյուջետային ծախսերի հիմնավորվածությանը, ինչի պարագայում վարվող բյուջետային քաղաքականությունն անգամ արդյունավետ բյուջետային ծախսերի պայմաններում

արձանագրում է չհիմնավորված կամ ոչ բավարար չափով հիմնավորված բյուջետային ծախսերի իրականացում: Այս առումով, բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հետ միասին դրանց հիմնավորվածության ապահովումը հանդես է գալիս ոչ միայն որպես բյուջետային քաղաքականության կատարելագործման, այլ նաև պետության ու հասարակության առջև ծառացած հիմնախնդիրների լուծման միջոց: Այս տեսանկյունից, առաջիկա տարիներին հանրապետությունում բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղղությամբ հիմնական խնդիրներից մեկը պետք է հանդիսանա բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովումը՝ այդ նպատակով համապատասխան մեխանիզմների ներդրմամբ ու գործնական կիրառմամբ:

Ատենախոսության ***«Եզրակացություններ»*** բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հատկանշական են հետևյալները՝

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ժամանակակից փուլում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների զգալի մասը պայմանավորված է պետական ֆինանսական միջոցների սահմանափակությամբ: Նման իրավիճակում բյուջետային քաղաքականության կատարելագործումը դառնում է հրամայական պահանջ, որի գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի բյուջետային միջոցների արդյունավետ, նպատակային և հիմնավորված օգտագործումը: Հատկապես սեփական եկամուտների ավելացման հնարավորությունների և ռեզերվների բացակայության դեպքում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը դառնում է հրամայական պահանջ: Ըստ էության Հայաստանի Հանրապետությունում ևս այն ունի առանձնահատուկ նշանակություն, որից մեծապես կախված է պետության և հասարակության առջև ծառացած հիմնախնդիրների լուծումն ու սահմանված նպատակների ձեռքբերումը: Միևնույն ժամանակ, նման խնդրի լուծումը պետք է դիտարկել առավել լայն համատեքստում՝ բյուջետային պլանավորումից սկսած մինչև ծախսերի իրականացում, քանի որ վերջիններիս արդյունավետության, հիմնավորվածության և նպատակայնության ապահովումը մեծապես պայմանավորված է բյուջետային գործընթացի բոլոր փուլերում իրականացվող քայլերով և կիրառվող մոտեցումներով:
2. Հանրապետությունում բյուջետային քաղաքականության կատարելագործման տեսանկյունից լուրջ խնդիրներ են առկա ծրագրային բյուջետավորման համակարգի

գործունեության հետ կապված: Չնայած դրա օրենսդրական հիմքերի առկայությանն ու այդ ուղղությամբ որոշակի աշխատանքների իրականացմանը՝ այդուհանդերձ դրա լիարժեք գործունեությունը դեռևս հեռու է ցանկալի մակարդակից: Բյուջետային ծրագրերի կապն ու ներադաշնակությունը ռազմավարական պլանավորման համակարգի հետ դեռևս ամբողջությամբ ապահովված չէ, իսկ շատ դեպքերում ոչ ֆինանսական արդյունքների սահմանումը, դրանց քանակապես չափելիության ապահովումը և մի շարք այլ խնդիրների լուծումներ հեռու են ցանկալի մակարդակից: Դրանք շատ դեպքերում ընդհանրական են և քանակապես ոչ չափելի, ինչի պարագայում ակնկալվող արդյունքների գնահատման հնարավորություններն էականորեն նվազում են: Ավելին՝ ծրագրերի նպատակն ու արդյունքները երբեմն միմյանցից հստակ չեն տարանջատվում և կրկնում են միմյանց: Այլ կերպ ասած՝ չնայած ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացված քայլերին այդուհանդերձ չի ապահովված դրա քանակապես չափելի ոչ ֆինանսական ցուցանիշների մշակումը, ինչը հանրապետությունում իրականացվող բյուջետային քաղաքականության կատարելագործման լուրջ խոչընդոտներից է:

3. ՀՀ օրենսդրությամբ բյուջեների և բյուջետային ծախսերի սահմանումն ու մեկնաբանությունը բավականաչափ նեղացված է և դրանց սոցիալ-տնտեսական բովանդակությունը հանգում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացմանը, ինչը կարծում ենք՝ չի արտացոլում դրանց էությունը: Կարծում ենք, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով պետք է տալ բյուջեի հնարավորինս լիարժեք և ամբողջական սահմանում, որն առավելագույն կերպով կարտացոլի տվյալ կատեգորիայի սոցիալ-տնտեսաան բովանդակությունը: Տվյալ սահմանմամբ ամրագրված նպատակները պետք է ուղենիշ ու հիմք հանդիսանան օրենսդրական կարգավորումների և դրանց ձեռքբերման գործիքների և մեխանիզմների ամրագրման համար: Պետական բյուջեն պետք է դիտարկվի որպես պետության նպատակների ձեռքբերման և խնդիրների լուծման միջոց, որին էլ պետք է ուղղված լինեն պետական կառավարման մարմինների լիազորությունները: Այս առումով առաջարկում ենք բյուջեն սահմանել որպես պետության նպատակների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ դրամական

միջոցների ձևավորման և օգտագործման ֆինանսական պլան: Օրենսդրական մակարդակով բյուջեի նպատակային նշանակության ամրագրումը կարևոր նշանակություն կունենա դրա իրացման համար նախատեսված գործիքների և սահմանված նպատակների համադրելիության գնահատման համար:

4. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում բյուջետային քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը, թերևս, ծախսերի արդյունավետության բարձրացումն է: «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված արդյունավետության սկզբունքը որպես այդպիսին խիստ ընդհանրական է և քանակապես ոչ չափելի, իսկ կիրառման տեսանկյունից՝ բավականաչափ բարդ: Նման իրավիճակում բյուջետային ծախսերի արդյունավետության թե՛ մեկնաբանությունը, թե՛ դրա գնահատման փորձերը կրում են ինչ-որ առումով հայեցողական բնույթ: Դրանց գնահատման մեթոդաբանության բացակայության պայմաններում տարբեր փաստաթղթերում նշվող բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման վերաբերյալ հայտարարություններy ստանում են հռչակագրային բնույթ: Բացի վերը նշված խնդիրներից օրինաչափ հարց է առաջանում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման մեթոդների և ուղիների որոշման հնարավորությունների հետ կապված՝ պայմանավորված արդյունավետության սահմանման բացակայության հետ:

5. ՀՀ բյուջետային օրենսդրությունում տեղ գտած երկիմաստ մեկնաբանությունների պատճառով բյուջետային փաստաթղթերում հարկային եկամուտների մանրամասնեցված բացվածքը բացակայում է, ինչը հակասում է բյուջետային ուղերձի տրամաբանությանն ու նպատակային նշանակությանը: Ակնհայտորեն դա չի նպաստում նաև բյուջետային փաստաթղթի իրատեսության գնահատմանը, քանի որ դրա ուսումնասիրությունը հնարավորություն չի տալիս ձևավորել անհրաժեշտ պատկերացումներ և գնահատականներ առանձին հարկատեսակների գծով աճի կամ նվազման հիմնավորվածության վերաբերյալ: Դրանց գծով կանխատեսումների, ինչպես նաև հարկային եկամուտների ակնկալվող աճի բացվածքի և այն պայմանավորող գործոնների վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս լիարժեք և ամբողջական կերպով գնահատել և պատկերացում կազմել ինչպես հարկաբյուջետային ցուցանիշների

փոփոխության միտումների, այնպես էլ պլանավորվող ցուցանիշների իրատեսականության և արժանահավատության վերաբերյալ: Դա, ըստ էության, բյուջեների իրատեսության սկզբունքի խախտում է: Հետևաբար, կարծում ենք, որ բյուջետային փաստաթղթի ամբողջականության ապահովումը ենթադրում է վերը նշված կանխատեսումների համակողմանի և մանրակրկիտ ներկայացում:

6. Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության հիմնախնդիրներից մեկը բյուջետային և ռազմավարական պլանավորման համակարգերի միջև փոխկապվածության բացակայությունն է: Ներկայումս հանրապետությունում գոյություն ունեն մի քանի ոլորտային զարգացման ռազմավարություններ, որոնց միջև փոխկապվածություն և համակարգվածություն չկա: Նման պայմաններում բյուջետային պլանավորման հետ դրանց համադրումը չի կարող ապահովել ցանկալի արդյունքներ միասնական մոտեցումների, նպատակների և լուծումների տեսլականի բացակայության պատճառով: Ոլորտային ռազմավարությունների, Կառավարության հնգամյա ծրագրերի, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և ամենամյա պետական բյուջեների միջև համակցվածությունը չափազանց թույլ է, ինչի հետևանքով պետական բյուջեն դառնում է տարեկան կտրվածքով խնդիրների լուծման գործիք երկարաժամկետ նպատակներ հետապնդելու փոխարեն: Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության կատարելագործման կարևոր ուղղություններ մեր կարծիքով պետք է հանդիսանան միջնաժամկետ բյուջետային կանխատեսումների և բյուջեի ծախսերի պլանավորման ծրագրանպատակային մեթոդների հետագա զարգացումը, տարեկան և հեռանկարային բյուջետային պլանավորման փոխկապվածության խորացումը, բյուջետային միջոցների կառավարման ժամանակակից ձևերի և մեթոդների կիրառումը, պետական ֆինանսական վերահսկողության համակարգի կատարելագործումը և բյուջետային գործընթացի մասնակիցների պատասխանատվության ուժեղացումը:

7. Բյուջետային ծախսերի արդյունքների պլանավորումը պետք է հիմնվի համակարգային մոտեցման վրա՝ հաշվի առնելով դրված խնդիրների լուծման վրա ազդող բոլոր հնարավոր գործոնները: Այս տեսանկյունից նպատակահարմար ենք համարում բյուջետային ծախսերի պլանավորման հետևյալ համակարգային մոտեցումը, որն իր մեջ ընդգրկում է հետևյալ փուլերը՝

- սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նպատակների և բյուջետային միջոցների հատկացման գերակայությունների որոշում և հաստատում,
- բյուջետային պլանավորման սուբյեկտների գործունեության նպատակների և խնդիրների փոխկապակցում սոցիալ-տնտեսական ռազմավարական նպատակների և բյուջետային միջոցների հատկացման գերակայությունների հետ,
- բյուջետային ծախսերի վերջնական սոցիալ-տնտեսական էֆեկտի և անմիջական արդյունքների ցուցանիշների որոշում,
- դրված խնդիրների լուծման օպտիմալ տարբերակի ընտրություն,
- բյուջետային միջոցների օգտագործման հնարավոր ռիսկերի հաշվառում,
- բյուջետային ծախսերի իրականացումն ապահովող իրավական և մեթոդական ապահովվածության մշակում:

8. Հայաստանի Հանրապետությունում գործող իրավակարգավորումներով բյուջետային ծախսերի արդյունավետությունը դիտարկվում է նվազագույն ծավալով նախատեսված արդյունքի, նախատեսված ծավալով լավագույն արդյունքի, կատարված ծախսերի և դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցության ապահովման ասպեկտներով: Նման կարգավորումների պայմաններում արդյունավետության գնահատումն, ըստ էության, դառնում է գրեթե անհնարին առավել ևս, որ բացակայում են համապատասխան չափորոշիչները: Բյուջետային ծախսերի արդյունավետության սկզբունքի իրացման համար անհրաժեշտ է ըստ ծախսերի ուղղությունների մշակել արդյունքային ցուցանիշներ՝ հիմնվելով ոչ միայն տվյալ տարվա, այլև մի քանի տարիների դինամիկայի վրա:

9. Բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման ժամանակ կարծում ենք՝ որպես լավագույն արդյունք պետք է դիտարկել ակնկալվող արդյունքի ստացումը, որն էլ հենց որպես այդպիսին ամրագրված կլինի բյուջետային ծախսերի պլանավորման փուլում: Այս առումով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով պետք է հստակ և հնարավորինս կոնկրետ սահմանվեն բյուջետային ծախսերի արդյունավետություն և ռացիոնալություն հասկացությունները՝ դրանց գնահատման մոտեցումների և չափորոշիչների ամրագրմամբ: Կարծում ենք՝ որպես բյուջետային ծախսերի արդյունավետության ցուցանիշ պետք է դիտարկել ծրագրային բյուջեներով

սահմանված ակնկալվող արդյունքների փաստացի ապահովումը: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ այս մոտեցումը ծախսերի բոլոր տեսակների համար կիրառելի չէ՝ պայմանավորված որոշների գծով քանակապես չափելի արդյունքների մշակման անհնարինությամբ: Խնդիրը կայանում է նրանում, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր բյուջետային տարբեր ծրագրերի գծով մշակել քանակապես չափելի արդյունքային ցուցանիշներ: Հետևաբար, նման պայմաններում ծրագրային բյուջետավորման համակարգին ամբողջական անցումը ոչ միայն նպատակահարմար չէ, այլև արժեզրկում է ամբողջ համակարգի գաղափարը: Կարծում ենք՝ հանրապետությունում բյուջետավորման մոտեցումների մասով պետք է որոշակի տարբերակում մտցնել: Այն ոլորտների համար, որոնցում հնարավոր է մշակել քանակապես չափելի ակնկալվող արդյունքներ պետք է կիրառել ծրագրային բյուջետավորման համակարգը, իսկ մյուսների պարագայում, որտեղ դա հնարավոր չէ՝ նախահաշվային մոտեցումը:

10. Հայաստանի Հանրապետությունում բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովման նպատակով առաջարկում ենք երկրի և հասարակության զարգացման գերակայությունների և ռազմավարական նպատակների մշակում և փաստաթղթային ամրագրում և բյուջետային գործընթացում դրանց իրականացման առավելագույն հաշվի առնում: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագիր, որում կարտացոլվեն ՀՀ սահմանադրութամբ ամրագրված նպատակների ձեռքբերմանն ուղղված միջոցառումները՝ հստակ ժամկետների և ակնկալվող արդյունքների ձևակերպմամբ: Այն պետք է ունենա գիտական հիմնավորվածություն (ակադեմիական և փորձագիտական շրջանակների ակտիվ ներգրավմամբ)՝ հաշվի առնելով զարգացման բոլոր հնարավոր սցենարները: Տվյալ փաստաթղթով պետք է սահմանվեն ՀՀ տնտեսական զարգացման մոդելը, սոցիալական պետության հայեցակարգային սկզունքները, երկրի սահմանադրությամբ ամրագրված սոցիալական երաշխիքների տրամադրման ուղիները: Այլ կերպ ասած՝ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը պետք է ապահովի Սահմանադրությամբ ամրագրված երկրի տնտեսական և հասարակական զարգացման նպատակների ձեռքբերմանն ուղղված մեխանիզմները, մոտեցումները և ուղիները:

11. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել «բյուջեների ծախսերի հիմնավորվածություն»-ը որպես բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունք: Այն նշանակում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ իրավասու մարմինները և բյուջետային միջոցներ ստացողները այդ միջոցները պետք է պլանավորեն և օգտագործեն այնպիսի ծավալներով, ժամկետներում և ձևերով, որոնք կապահովեն ՀՀ Սահմանադրությամբ և սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների իրականացումը: Միաժամանակ, տվյալ օրենքում պետք է ամրագրել, որ բյուջետային ծախսերի ձևավորումն իրականացվում է դրանց հիմնավորվածության գնահատման հիման վրա, որն իր մեջ ներառում է՝

- ծախսերի համապատասխանության վերլուծությունը բյուջետային համակարգի մակարդակին,
- ծախսերի համապատասխանությունը տնտեսական քաղաքականության գաղափարախոսությանը,
- ռազմավարական նպատակներին բյուջետային ծախսերի համապատասխանության գնահատումը, տվյալ ծավալով առաջիկա տարվա բյուջեի ծախսերում ընդգրկելու նպատակահարմարությունը:

12. Բյուջետային ծախսերի հիմնավորվածության չափորոշիչներ պետք է հանդիսանան հետևյալները՝

- բյուջետային ծախսերի կազմի, ծավալի և կառուցվածքի համապատասխանությունը պետության ռազմավարական նպատակներին և տնտեսական քաղաքականության ընտրված մոդելին,
- բյուջետային ֆինանսավորման ծավալների բավարարությունն ու անհրաժեշությունը պետության և հասարակության նպատակների (երկրի սահմանադրությամբ և ռազմավարական փաստաթղթերով ամրագրված) ձեռքբերման համար,

13. Բյուջետային ծախսերի հիմնավորվածությունը նախ և առաջ, դրանց համապատասխանությունն է երկրի զարգացման ռազմավարական նպատակներին, ինչի համար անհրաժեշտ է իրականացնել

- բյուջետային ֆինանսավորում ստացողների, նրանց կողմից լուծման ենթակա խնդիրների և ֆինանսական կարիքների «գույքագրում»,
- բյուջետային ծախսերի հիմնավորվածության տնտեսական վերլուծություն, որի արդյունք պետք է հանդիսանա ծախսերի օպտիմալացումը և պահանջմունքների բյուջեի ձևավորումը,
- տնտեսության եկամտային բազայի և մասնավորապես հարկային ներուժի գնահատում և բյուջետային ծախսերի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների բացահայտում,
- բյուջետային համակարգի տարբեր մակարդակների միջև եկամտային աղբյուրների և ծախսային պարտավորությունների հստակ տարանջատում,
- հնարավորությունների բյուջեի կազմում՝ հաշվի առնելով սահմանափակ ֆինանսական ռեսուրսները և բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման նպատակով կիրառվող չափորոշիչները,
- բյուջետային ֆինանսավորման համակարգի ձևավորում ֆինանսավորման տարբեր ձևերի և մեթոդների գնահատման և բյուջետային գործընթացի տարբեր փուլերում դրանց օգտագործման նկատմամբ վերահսկողության հնարավորության հիման վրա,
- Բյուջեի կատարման կազմակերպական մեխանիզմների մշակում և ներդրում:

14. Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հետ միասին դրանց հիմնավորվածության ապահովումը հանդես է գալիս ոչ միայն որպես բյուջետային քաղաքականության կատարելագործման, այլ նաև պետության ու հասարակության առջև ծառացած հիմնախնդիրների լուծման միջոց: Այս տեսանկյունից առաջիկա տարիներին հանրապետությունում բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղղությամբ հիմնական խնդիրներից մեկը պետք է հանդիսանա բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովումը՝ այդ նպատակով համապատասխան մեխանիզմների ներդրմամբ ու գործնական կիրառմամբ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ներդնել բյուջետային ծախսերի հիմնավորվածության գնահատման համակարգ: Ըստ էության, սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում նշված խնդիրների լուծումը, ինչպես նաև ծախսային գերակայությունների սահմանումը պետք է տեղի ունենա

բյուջետային ծախսերի պլանավորման փուլում, որի բարելավումը բյուջետային քաղաքականության կատարեագործման կարևոր ուղղություններից է:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ տպագրված աշխատություններում՝

1. Վ. Բոստանջյան, Ա. Աղաբաբյան. **«Բյուջետային ծախսերի պլանավորման և ակնկալվող արդյունքների գնահատման մեխանիզմների կատարելագործման մոտեցումները»**

«Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղի 1(5), 2021թ., էջեր 57-65

2. Ա. Աղաբաբյան. **«Բյուջետային ծախսերի արդյունավետության տեսական հիմքերը և գնահատման հիմնահարցերը»**

«Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղի 1(5), 2021թ., էջեր 246-254

3. Վ. Բոստանջյան, Ա. Աղաբաբյան. **«Բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովման խնդիրները»**

«Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես– տնտեսագիտություն, գործարարություն, կառավարում, հոկտեմբեր-դեկտեմբեր # 4, 2021թ., էջեր 196-203

4. Վ. Բոստանջյան, Ա. Աղաբաբյան. **«Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնական մոտեցումները»**

«Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղի 1(6), 2022թ., էջեր 57-67

5. Ա. Աղաբաբյան. **«Բյուջետային քաղաքականության հիմնախնդիրները և դրա վրա ազդող գործոնները»**

«Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղի 1(6), 2022թ., էջեր 294-303

6. Ա. Աղաբաբյան. **"The role of the budget system in state regulation of the economy"**

«Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես – տնտեսագիտություն, գործարարություն, կառավարում, հոկտեմբեր-դեկտեմբեր # 4, 2024թ., էջեր 3-7

АГАБАБЯН АНИ

ПУТИ УЛУЧШЕНИЯ БЮДЖЕТНОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика и управление народным хозяйством и его отряслями».

Защита диссертации состоится 24-ого января 2025г. в 13:30 на заседании специализированного совета 015 Комитета по высшему образованию и науке Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

После обретения политической независимости с целью формирования рыночной экономики в Республике Армения были осуществлены широкомасштабные экономические преобразования, одним из важных направлений которых были преобразования бюджетной системы. Создание бюджетной системы, отвечающей требованиям рыночной экономики и обеспечивающей надлежащее осуществление функций государства, было достаточно сложным процессом по институциональным и правовым основаниям, а также по отсутствию традиций в сфере управления государственными финансами и по ряду других объективных и субъективных причин. На современном этапе экономического развития, исходя из императива долгосрочного развития экономики РА, разработка и практическое применение подходов к совершенствованию бюджетной политики приобрела ключевое значение.

Диссертация посвящена изучению указанных вопросов, чем и обусловлены актуальность и актуальность темы:

Основной целью работы является разработка подходов и предложений, направленных на совершенствование бюджетной политики в Республике Армения, для достижения которой в работе были поставлены и решены следующие задачи:

- изучить социально-экономическое содержание и роль бюджета в государственном регулировании экономики,

- изучить сущность и основные задачи бюджетной политики, проанализировать теоретические основы бюджетных расходов и вопросы обеспечения их эффективности,
- проанализировать законодательно-правовые и организационные основы бюджетной политики в Республике Армения, выявить проблемы ее реализации и факторы, влияющие на ее эффективность в Республике Армения,
- изучить вопросы обеспечения обоснованности бюджетных расходов,
- разработать основные направления совершенствования бюджетной политики в Республике Армения:

Основные научные результаты работы, обусловленные решением задач, поставленных в исследовании, заключаются в следующем:

- В результате всестороннего анализа законодательного поля, регламентирующей функционирование и деятельность бюджетной системы, выявлены существующие пробелы и недостатки, представлены предложения, направленные на совершенствование бюджетной политики,
- в результате всестороннего анализа теоретических основ бюджетных расходов разработаны основные направления по обеспечению эффективности бюджетных расходов и методологические основы ее оценки,
- было предложено рассматривать обоснованность бюджетных расходов как принцип, лежащий на основе бюджетной системы; выявлены и систематизированы задачи по обеспечению обоснованности бюджетных расходов; предложен комплекс мер, направленных на их решение, с представлением последовательных шагов на этапах планирования и реализации бюджетных расходов,
- разработан многоэтапный подход к планированию бюджетных расходов, от определения приоритетов бюджетных расходов на основе стратегических целей социально-экономического развития до определения путей правового и методологического обеспечения, закрепляющего выполнение бюджетных расходов.

Ani Aghababyan

WAYS TO IMPROVE THE BUDGET POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.02 "Economy, the economics of its spheres and control''.

The defense of the dissertation will take place at 13:30, January 24, 2025, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address: 0025, Yerevan, 52 Abovyan st.

ABSTRACT

After gaining political independence, in order to form a market economy, large-scale economic transformations were carried out in the Republic of Armenia, one of the important directions of which was the transformation of the budget system. The creation of a budget system that meets the requirements of a market economy and ensures the proper implementation of state functions was a rather complicated process for institutional and legal reasons, as well as for the lack of traditions in the field of public finance management and for a number of other objective and subjective reasons. At the present stage of economic development, based on the imperative of long-term development of the RA economy, the development and practical application of approaches to improving budget policy has acquired key importance.

The dissertation is devoted to the study of these issues, which determines the relevance and relevance of the topic:

The main purpose of the work is to develop approaches and proposals aimed at improving the budget policy in the Republic of Armenia, for the achievement of which the following tasks were set and solved in the work:

- to study the socio-economic content and the role of the budget in state regulation of the economy,

• to study the essence and main objectives of budget policy, to analyze the theoretical foundations of budget expenditures and issues of ensuring their effectiveness,

• analyze the legislative, legal and organizational foundations of the budget policy in the Republic of Armenia, identify problems of its implementation and factors affecting its effectiveness in the Republic of Armenia,

• to study the issues of ensuring the validity of budget expenditures,

• develop the main directions for improving the budget policy in the Republic of Armenia:

The main scientific results of the work, due to the solution of the tasks set out in the study, are as follows:

• as a result of a comprehensive analysis of the legislative framework regulating the activities of the budget system, the existing gaps and shortcomings have been identified, and proposals have been presented aimed at improving the budget policy,

• as a result of a comprehensive analysis of the theoretical basis of budget expenditures, the main approaches to ensure the efficiency of budget expenditures and the methodological basis for its assessment have been developed,

• it has been proposed to consider the justification of budget expenditures as a principle underlying the budget system, the main problems of ensuring the justification of budget expenditures have been identified and systematized, a set of measures aimed at solving them has been proposed, presenting sequential steps in the stages of planning and implementation of budget expenditures,

• a multi-stage approach to budget expenditure planning has been developed, from defining the budget expenditure priorities based on the strategic goals of socio-economic development to establishing the legal and methodological means to ensure the implementation of the budget expenditure.